Ընկերության անվանում՝	**«Բարձրավոլտ էլեկտրացանցեր»ՓԲԸ**
Հասցե՝	ՀՀ, ք. Երևան, Զորավար Անդրանիկի 1
Հեռ.՝	060 38 00 01
Էլ. փոստ՝	hven@hven.am
Ինտերնետային կայք՝	www.hven.am

ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԶԵԿՈՒՅՑ

Նկարագրական մաս

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի 100%-ով բաժնետոմսերը պատկանում են Հայաստանի Հանրապետությանն՝ ի դեմս ՀՀ կառավարության, իսկ բաժնետոմսերի կառավարման լիազորությունը վերապահված է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

Ընկերությունը շահույթ ստանալու նպատակ հետապնդող առևտրային կազմակերպություն է: Ընկերության հիմնական գործունեության տեսակն է Հայաստանի Հանրապետությունում էլեկտրական էներգիայի (հզորության) հաղորդումը սեփականության իրավունքով իրեն պատկանող բարձրավոլտ էլեկտրահաղորդման ցանցերով:

ՀՀ կառավարության 06.11.2003թ. թիվ 1694-Ն որոշման համաձայն՝ Ընկերության խորհուրդը բաղկացած է 6 անդամից՝ 3 անդամ առաջարկվում է Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի կողմից, Ընկերության գլխավոր տնօրենն՝ ի պաշտոնե, մեկական անդամ՝ էլեկտրաէներգետիկական շուկայի մասնավոր հատվածը ներկայացնող ընկերության, էներգետիկական ոլորտին առնչվող ակադեմիական (գիտական) որևէ հաստատության կողմից:

ՀՀ կառավարության 29.04.2010թ. թիվ 474-Ն որոշման համաձայն՝ Խորհրդի կազմում ընդգրկվել է նաև ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի ներկայացուցիչը:

1. ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Ընկերության կանոնադրության և Կանոնագրքի պահանջների համաձայն՝ Ընկերությունը սահմանել է հետևյալ կորպորատիվ կառուցվածքը.

ա) Բաժնետերերի ընդհանուր ժողով,

բ) Խորհուրդ,

գ) Գործադիր մարմին

Խորհուրդը Խորհրդի հանձնաժողովներ չի ստեղծել:

Ընկերության բոլոր բաժնետոմսերը տեղաբաշխված են, պատկանում են Հայաստանի Հանրապետությանը, վճարված են նրա կողմից և կառավարվում են ՀՀ կառավարության և նրա լիազորած անձի՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի կողմից:

Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 21 799 049 406, 77424 (քսանմեկ միլիարդ յոթ հարյուր իննսունինը միլիոն քառասունինը հազար չորս հարյուր վեց 77424/10000) ՀՀ դրամ, որը կազմում է 560 535,0 (հինգ հարյուր վաթսուն հազար հինգ հարյուր երեսունհինգ) հատ հասարակ (սովորական), անվանական բաժնետոմս, մեկ բաժնետոմսի անվանական արժեքը՝ 38 899, 7203685305 (երեսունութ հազար ութ հարյուր իննսունինը 7203685305/10000000000)ՀՀ դրամ:

Բոլոր բաժնետոմսերը տեղաբաշխված են, պատկանում են Հայաստանի Հանրապետությանը, վճարված են նրա կողմից և կառավարվում են ՀՀ կառավարության և նրա լիազորած անձի՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի կողմից:

3. ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ (ԲԸԺ)

1. Հաշվետու տարում՝ 2024թ. գումարվել է 10 արտահերթ ընդհանուր ժողով: Բոլոր արտահերթ ընդհանուր ժողովները գումարվել են ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունում:

2. Օրակարգը և համապատասխան փաստաթղթերն ուղարկվել են ժողովի մասնակիցներին:

3. Բաժնետերը հնարավորություն է ունեցել Բաժնետերերի ընդհանուր ժողովին մասնակցել լիազորված ներկայացուցչի միջոցով:

4. Բաժնետերը կումուլյատիվ քվեարկությամբ չի քվեարկել, քանի որ բաժնետերը մեկն է:

4. ԽՈՐՀՈՒՐԴԸ

Խորհրդի գործառույթները

Ընկերության կանոնադրության 12-րդ կետը սահմանում է Խորհրդի բացառիկ իրավասությունները:

Խորհրդի պատվիրակված իրավասություններ չեն սահմանվել:

Խորհրդի կազմը

Ընկերության Խորհուրդը բաղկացած է 6 անդամից, որոնցից հինգը ոչ գործադիր են:

ԽՈՐՀՈՒՐԴ				
Պաշտոնը և անունը	**Գործադիր[1]**	**Ոչ գործադիր[2]**	**Անկախ**	**Խորհրդի անդամ է սկսած՝**
1. Անդամ՝ Արամ Խաչատրյան		**ոչ գործադիր**		**20.03.2024թ.**
2. Անդամ՝ Արմեն Մելիք-Իսրայելյան		**ոչ գործադիր**		**13.09.2010թ**
3. Անդամ՝ Կարեն Սարգսյան		**ոչ գործադիր**		**20.09.2020թ.**
4. Անդամ՝ Վարդան Բուռնազյան		**ոչ գործադիր**		**20.09.2018թ.**
5. Անդամ՝ Ոստանիկ Մարուխյան		**ոչ գործադիր**		**06.03.2020թ.**
6. Անդամ՝ Դավիթ Միրզոյան	**գործադիր**			**03.10.2023թ.**

Խորհրդի գործունեությունը

2024թ. ընթացքում խորհուրդը գումարել է 9 նիստ:

Խորհրդի աշխատանքի գնահատումը

Խորհուրդը չի ընդունել գնահատման քաղաքականություն:

Խորհուրդը չի իրականացրել ինքնագնահատում:

5. ԽՈՐՀՐԴԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԸ

Խորհուրդը հանձնաժողովներ չի ստեղծել:

Աուդիտի հանձնաժողով

Խորհուրդը աուդիտի հանձնաժողով չի ստեղծել:

[1] Խորհրդի գործադիր անդամը Ընկերության ամենօրյա ղեկավարման մեջ ներգրավված անձն է:
[2] Համաձայն Կանոնագրքի, Խորհրդի ոչ գործադիր անդամը այն անձն է, ով ներգրավված չէ Ընկերության կամ նրա որևէ դուստր ընկերության ընթացիկ ղեկավարման մեջ:

6. ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆ

Ընկերության գործադիր մարմինը հանդիսանում է գլխավոր տնօրենը:

7. ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏ

Խորհրդի կողմից Ընկերության ներքին աուդիտ չի նշանակվել:

8. ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Խորհրդի կողմից Ընկերության կորպորատիվ քարտուղար չի նշանակվել, սակայն նրա պարտականությունները մասնակիորեն կատարում է Խորհրդի քարտուղարը՝ համաձայն Խորհրդի գործունեության կանոնակարգի (խորհրդի նիստերի հրավիրում, նիստին ներկայացվող փաստաթղթերի նախապատրաստում, արձանագրության վարում և այլն) :

9. ԱՐՏԱՔԻՆ ԱՈՒԴԻՏ

Ընկերության արտաքին աուդիտն իրականացնող անձն ընտրվում է մրցութային կարգով, որը հաստատվում է ԲԸԺ-ի կողմից, համաձայն՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 67 հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի, իսկ նրա վարձատրության չափը սահմանում է Խորհուրդը՝ համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 84 հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի: Ընկերության 2024թ. արտաքին աուդիտ իրականացնող անձը հաստատվել է ԲԸԺ-ի՝ 11.12.2024թ. որոշմամբ, իսկ վարձատրության չափը սահմանվել է խորհրդի որոշմամբ:

10. ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ընկերության տարեկան հաշվետվությունը նախապես հաստատվել է Ընկերության խորհրդի կողմից 2025 թվականի մայիսի 26-ի նիստով:

ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ ԴԱՎԻԹ ՄԻՐԶՈՅԱՆ